

19 99

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀԱՅ ԲԺԵԿԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ



ՏԱՐԵՇՐՋԱՆԻ

1914 - 1915

ՊԱՏՐԱՍՏՈՒԱԾ

ԱՏԵՆԱՊԵՏ


Տօֆր. ՎԱՀՐԱՄ Յ. ԹՈ ՐԳՈՄԵՍՆԵԿ

ԵՒ

ԿԱՐԴԱՑՈՒԱԾ

ՕՐ ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ՍԿԻՖԸ

1919 Յունիար 3ին



Կապութիւն Ս. ՕՀԱՆԵՍՆ

Քերա, Թաղամբ, 67

1919

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀԱՅ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԻԱԽԹԵԱՆ

Գ. ՏԱՐԵՎՐՁԱՆԻ

1914-1915

ՊԱՏՐԱՍՏՈՒԱԾ

ԱՏՎԱՏ


Տօֆք ՎԱՀՐԱՄ Յ. ԹԱՐԳՈՄԵԱՆՆԵ

Եկ.

ԿԱՐԴԱՑՈՒԱԾ

Ըստ ՏԱՐԵՎՐՁԱՆԻ ՍԿԻՖԸ

1919 Յունիոն Ֆին



4702-6

28 702

ԴԻՒԱՆ Ա. ՏԱՐԵՇՐՋԱՆԻ

1912—1913

Ամենավեց	Տօքթ. Հ. Պ. ՄՈՍԹԵՂՈՍԵԱՆ
Դեր-Ամենավեց	Տօքթ. Վ. Յ. ԹՈՐԳՈՄԵՍԵԱՆ
Ամենալոյիր	Տօքթ. Գ. ԳԱԼԻՒԹԵԱՆ
Դեր-Ամենալոյիր	Տօքթ. ԱԵՐԹԱԼԵԱՆ
Գանձապետ	Տօքթ. Բ. ԶԵԼԻՆԿԻՐԵԱՆ
Գրապահ	Տօքթ. Յ. ԷՐՄԵՔՃԵԱՆ

ԴԻՒԱՆ Բ. ՏԱՐԵՇՐՋԱՆԻ

1913—1914

Ամենավեց	Տօքթ. Հ. Պ. ՄՈՍԹԵՂՈՍԵԱՆ
Դեր-Ամենավեց	Տօքթ. Գ. ԶՈՀՐՈՊ
Ամենալոյիր	Տօքթ. Գ. ԳԱԼԻՒԹԵԱՆ
Դեր-Ամենալոյիր	Տօքթ. Խ. ՓՈՓՈԶԵԱՆ
Գանձապետ	Տօքթ. Բ. ԶԵԼԻՆԿԻՐԵԱՆ
Գրապահ	Տօքթ. Պ. ՊԱԶԻՒ, ԽԱՆ

ԴԻՒԱՆ Գ. ՏԱՐԵՇՐՋԱՆԻ

1914—1915

Ամենավեց	Տօքթ. Վ. ԹՈՐԳՈՄԵՍԵԱՆ
Դեր-Ամենավեց	Տօքթ. Բ. ԶԵԼԻՆԿԻՐԵԱՆ
Ամենալոյիր	Տօքթ. Յ. ԱՐԹԻՆԵԱՆ
Դեր-Ամենալոյիր	Տօքթ. Խ. ԳԱԼԻՆԱԶԵԱՆ
Գանձապետ	Տօքթ. Յ. ՏԱ.ՏՈՒՐ
Գրապահ	Տօքթ. ՊԱ.ԶԻՒ, ԽԱՆ

ԴԻՒԱՆ Ը. ՏԱՐԵՇՐՋԱՆԻ 1919.

Ամենավեց	Տօքթ. Վ. ԹՈՐԳՈՄԵՍԵԱՆ
Դեր-Ամենավեց	Տօքթ. Բ. ԶԵԼԻՆԿԻՐԵԱՆ
Ամենալոյիր	Տօքթ. ԵԿ. ՇՈ.ՀՊԱ.Զ
Դեր-Ամենալոյիր	Տօքթ. Ա. ՊԱ.ԶԻՎ.Ա.ՆԵԱՆ
Գանձապետ	Տօքթ. Յ. ՏԱ.ՏՈՒՐ
Գրապահ	Տօքթ. Գ. ԶԱՐՖՃԵԱՆ

ՅԱՐԳԵԼԻ ԱՐՈՒԵՍՏՈՎԿԻ ՀԵՏԵՐ,

Հայ բժշկական Միութեան 1914—1915 Տարեշրջանի այս Տեղեկագիրը, պիտի կարդացուէր՝ բառ օրինի, 1915 Մայիսին, բայց ընդհանուր պատերազմին պատճառաւ հետզհետէ ծագած ամենատխուր պարագայներ արգելվ եղան, և Միութիւնո իր Դրդ (1915—16), Երդ (1916—17) Զրդ (1917—18) Տարեշրջաններն և Երդ (1918—19) Տարեշրջանի մեծ մասը ակամայ անգործունչութեամբ և բռնազատուած քունի մը մէջ անցնելէ յետոյ, այսօր միայն, Բրդ Տարեշրջանին գրեթէ ոկիպը, կը վերազարթնու, շարունակելու համար իր աշխատութիւնները, որոնք այնչա՛փ թափով ու եռանդով սկսուեցան 1912ին, և որոնք գեղեցիկ գրաւական մ'էին ապագայ փայլուն յառաջադիմութեան:

Տարեկան Տեղեկագրի պատրաստութեան պաշտօնը, գիտէք՝ որ միշտ Ատենագրին կը վերաբերի բայց՝ որովհետեւ Միութեանո Ատենագրիրը Տօքթ. Արթենեան, իւր ընտրութենէն քիչ յետոյ, 1914 օգոստոսին մեկնեցաւ Գումանական բանակին ծառայելու, և Դեր-Ատենագրիրը Տօքթ Խ. Գալիամանեան զինուորական ծառայութեամբ միշտ բազմազբաղ, այժմս ալ բացակայէ, ստիպուեցայ ես ինքս կատարել անոնց պաշտօնը։ ուստի՝ այս՝ Դրդ Տեղեկագիրս եթէ իւր նախընթացներուն կատարելութիւնը չի ներկայացնէ Զեղի, կը ինդրեմ որ ներողամիտ ըլլաք։



Հայ Բժշկական Միութիւնն իր 1914—15ի Տարե-
ամքանը բոլորեց բեղմնաւոր գործունէութեամբ:

Բացի Դիւանի ժողովներէն, որոնք զրկիթէ 30 եղան,
անոր սովորական գումարումները կանոնաւորապէս տեղի
ունեցան միշտ Կայսերական Բժշկական Բնկերութեան
որանը և եղան ընդ ամէնը 18. այսինքն՝ նախորդ Տա-
րբերչանի ժողովներէն երեք, իսկ նախանախորդէն
վեց աւելի:

Առաջին ժողովը գումարուեցաւ 1914 մայիս 17ին,
նուիրուեցաւ բառ օրինի անցեալ տարեշրջանի Տեղեկա-
դրի ընթերցման, գանձապեսի ու գրապահի համարա-
տուութեան և ընարութեան նոր Դիւանի, զոր բաղկա-
ցուցին՝ Տօքթ. Վ. Յ. Թորգոմեան Ասենապետ, Տօքթ. Յ.
Զիլինկիրեան Գեր-Ասենապետ, Տօքթ. Յ. Արթինեան
Ասենապայր, Տօքթ. Խ. Գափամաճեան Գեր-Ասենապայր
Տօքթ. Յ. Տատուր Գանձապետ, Տօքթ. Պազիլ ԽանԳրապան,
(վերեւուած:)

Այս առաջին ժողովին մէջ էր, որ նախորդ Առե-
նապետ Տօքթ. Հ. Պ. Մատթէսոսեան արտասանեց՝
ընտիր ճառ մը, որով հաւեէր կը կարդար մեղի յարառե-
աշխատութեան, և քաջալեր կ'ըլլար՝ սերո Միութեան
ու անկեղծ իրերասիրութեան:

Հետզհետէ տեղի ունեցած 17 ժողովներուն մէջ
կարգացուեցան, Միութեան անդամներու կողմէ զրի
ամենուած աշխատասիրութիւններ, ո՛չ նուազ շահեկան
և հետաքրքրական քան անցեալ տարիներունը:

Ահաւասիկ անոնց ցուցակը,

1.—ԱՄԻՒՏՈՂԱԹ ԱՄԱՍԻԱՅԻ: 15րդ Դարու մէջ

ապրած այս Հայ բժիշկի մասին Տօքթ. Վահրամ Յ. Թոր-
գոմեան կարդաց ֆանսուերէն ուսումնասիրութիւն մը,
ի վեր համերավ ալո բժիշկին բեղմնաւոր կեանքը, բժը-
կական սուսար երկասիրութիւնները, որոնց մասին աշ-
խատութիւն մըն ալ հաղորդած էր նաև 1913ին Լանտո-
նի մէջ գումարուած միջազգային բժշկական Համա-
մալովին:

2.—Traitement abortif de la fiévre Typhoïde:
Սոյն նիւթին վրայ Տօքթ. Պէօրէքմեան ֆանսուերէն գը-
րուած աշխատութիւն մը ներկայացնելով, ուղեց
հաստատել, թէ իւրանար շինուկով կարելի էր մանու-
սենը իր սկզբնական վիճակին մէջ վիժեցնել, բուժել:

Տօքթ. Պէօրէքմեանի աշխատասիրնը թէև գոհու-
թեամբ լուսեցաւ, բայց աւելի ընտարձակ, մանաւանդ
աւելի հաստատական փորձերու կարօւ լլլան ալ ըն-
ուեցաւ ժալովականներու մեծամասնութեան կողմէն:

3.—Une Complication rare della pneumonia ֆանս-
ուերէն աշխատութիւնը կարդաց՝ Տօքթ. Յ. Էրմէքմեան
և պատմոց Պոնտապէ բանուած տարիքու հիւանդի մը
վրայ պատահած կեղմանի ամենանզառադէալ բարու-
թիւն (Complication) մը, զոր ժալովը, վայց չոսրա-
կալութեամբ:

4.—Բժշկական ԴԱՍԱԳԻՐՔԵՐՈՒ ԱՌԱՍՍՊԵԼՆԵՐԻՆ
անունով Տօքթ. Պազիլ Խան հաղորդեց հայերէն գրու-
թիւն մը երկար, որոն մէջ կը խօսէր Պէկախի (Tétonos)
մասին, և կրկնելով հիմուց ի վեր ճանչցուած պրկաս-
տաբոյդ միջացները, կ'ուզէր ընդունիլ, թէ պրկախար
կրնաւ լլլալ նաև ինքնածին (Spontané): Տօքթ. Պա-

դիլի այս հաղորդագրութեան առթիւ Տօքթ . Նազարեան , Տօքթ . էքմէքձեան , և Տօքթ Գափամանեան յիշեցին իրենց գարմանած պրկախտի պարագայները , իսկ Տօքթ . Բ . Չիլինկիրեան Տօքթ . Պազիլի յայտնած գաղափարին հակառակ խօսելով , բայտ թէ Bacille de Nicolaëր միտյն կրնար պրկալս առթել :

5.— ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎԻՐԱԲՈՒԺԻԹԻՒՆԻ անունով Տօքթ . Հանջէրեան կարդած հայերէն շահեկան գրութիւն մը , որուն մէջ պատերազմի դաշտին վրայ կատարուած վիրարուժական գլխաւոր գործողութիւնները թուելէ յեւտոյ , ժողովին ներկայացուց , վերքերու ներւորդման (draignage) և ովկարելուն ներու (Fracture) դարմանումին համար իր կողմէ հնարուած ու արդէն զինուորական բըժժիկներու շատերէ գարծադրուած նոր միջոցներն ու եղանակները , որոնք գնահատութեամբ ծափահարուեցան:

6.— ԱՐԵՒԵԼԵԱՆ ՊԱԼԱԲՆԵՐ .— Այս մասին Տօքթ . Պազիլ Խան կարդաց հայերէն ուսումնասիրութիւն մը , որ ո՛չ այլ ինչ էր , բայց եթէ մանրամանն տեղեկատութիւն մը , այն ախտին դարմանումին համար մինչև ցարդ գործածուած միջոցներուն վրայ:

7.— Deux observations de Leucémie . Տօքթ . Յ . Էքմէքձեանի կողմէ պատրաստուած քրամներէն գեղեցիկ աշխատութիւն մը , որ էր՝ Սպիտակա բիւնութիւն (Leucémie) հիւնդութեան երկու առրեր ենթակայներու նկարագրութիւնը գիտնականորէն պատրաստուած և որ մեծապէս գնահատուեցաւ :

8.— Mélanhydrose mammaire սենյակին մելանիտներիւն , անունով Փուանսերէն աշխատութիւն մը դոր կարդաց Տօքթ . Վ . Թորգոմեան:

Պատմութիւնն էր ծերունի կնոջ մը , որուն երկու ասինքն սեւ կամ մելանի պէս հեղուկ մը կարութարէր : Տօքթ . Թորգոմեանի այս աշխատութիւնը իրեւ խիստ հաղուադէս պարագայի մը , հաղորդուած էր Բարբագի Աեադէմի մեdecineին , որուն 1914 մայիս 12ի նիստին Բրօֆ . Ռաֆայէլ Պլանշառ կարգացած էր զայն Տօքթ . Վ . Թորգոմեանի անունով :

9. L'extension dans les fractures compliquées des membres.— Տօքթ . Հանջէրեանի կողմէ պատրաստուած լաւ զրուցարութիւն մը , որուն մէջ հեղինակը բացատրեց թէ վերին և վարի անդամներու ռոկարեկումները կը դարմանէր ինչք իր կողմէն նոր հնարուած միջոցով մը , որ գործադրութեան էր արգէն զինուորական հիւնդականուցներու մէկ երկութիւն մէջ :

Ժողովածկաններու ջերմ չնորհակալութեանն արժանացաւ Տօքթ . Հանջէրեան , որ՝ ինչպէս զիսեց Ատենասիալը , յատկապէս օժտուած է բժշկական կամ վիրարուժական գործիքներ հնարելու յատկութեամբ , և հնարած է արգէն Forcéps redresseur մը [Ալլովասարմանան] անունով , որ հրատարակուած է Բարիզի Լա presse médicale թերթին , 1914 օգոստոս 1ի թիւն մէջ :

Սոյն գիտաւոր աշխատութիւններէն զատ , Միութեան ամէն ժողովներուն տեղի ունեցան բժշկուկան շահեկան ասուլիսներ կամ զրուցարութիւններ այսպէս՝

1.— Տօքթ . Փաշաեան պատմեց հեծախտաւորի մը վրայ տեմնուած ջնախր բիւսպարկաբարի [pleurésie avec épanchement] հետաքրքրական մէկ պարագայն ,

որ յառաջ եկած էր՝ հիւանդը բաց պատուհաններով սենեակի մոջ զարմանուած միջոցին օգային հոսանքներու դէմ հարկ եղած զգուշութենէ զուրկ մնացած ըլլաւ լուն պատճառաւ:

2.— Տօքթ. Հ. Պ. Մատթէոսեան խօսելով ներայի ջուրերուն այլևայլ տեղերու մէջ ունեցած զարշահուտութեան մասին, ինչ որ հաստատեց նաև Տօքթ. Կ. Մութափեան, շարժեց ժողովականներու ներաքրքրութիւնն և ուղեց՝ որ Հայ Բժշկական Միութեան միջուցաւ քաղաքապետութեան ուշադրութեան յանձնուի խնդիրը:

3.— Տօքթ. Եաղուալ ժողովին ներկայացաց Բիబրու դէգներէ սարcomaէս, անուն նեարդուոյ մը, զոր ինքը պուկարական հիւանդանոյին մէջ Histerectomy abdominalis (արովակային արգունումանութիւն) գործողաւթեամբ հանած էր, և որու մասին տեղի ունեցած խիստ շահեկան խորհրդականութիւններ, Տօքթ. Պաղիթ. Տօքթ. էքմէ. քնանի, մանաւանդ՝ Տօքթ. Բ. Զիլինկիրեանի կողմէ, որ յանձնարարեց այդպիսի ուռույները. Ք. ճառագիթներու ալ ենթարկել, վիրաբուժուկան գործողութեան անկարելիութիւն եղած առեն:

4.— Տօքթ. Վ. Թորգումեան ժողովին հալորդեց՝ ինքնազուրծութիւն (auto-opération) պարագայ մը, զոր վերջերս կարդացած է թերթերու մէջ, և օրուն հեղինակը եղած էր յոյն մը:

Այդ մարդը որ կը նեղուէր՝ կիրեւի, ստամքափառաւերէ, դանակով մը բացած էր իր ստամքաբ տեսնելու համար, թէ ի՞նչ էր ցաւին պատճառը, բայց դըմ-

բազուաբար իր շունչը փչած էր առանց նպատակին կարենալ համելու:

Սոյն պատմութեան վրայ, ժողովականներէն ումանք յիշեցին ինքնազուրծութիւն ուրիշ պարագայներ, երբեմն յաջողութեամբ պասկուած և կատարուած ոչ-բրժիշկներէ և նաև բժիշկներէ:

5.— Antigonococcique sérumով (շինուի) բուժուած ջերմամիզութեան քանի մը պարագայներ յիշեց Տօքթ. Խ. Փափազեան, ինչպէս նաև Տօքթ. Մալխաս, որ մասնաւրապէս ծանրացաւ artigon կոչուած զեղին ջերմամիզական բարդութեան համար ունեցած բուժիչ յատկութեան վրայ:

6.— Տօքթ. Մալխաս պատմեց՝ Opération pour les calculs des voies Biliaires գործողութեան մը խիստ փափուկ պարագայն՝ զոր յաջողապէս կատարած էր ինք Ալդ. Հիւանդանոյին մէջ մտնամանի քարերու համար և որ մեծապէս գնահատուեցաւ:

7.— Տօքթ. Խ. Գափամանեան, պատմեց իր կատարած Taille périénale (արքանակային ներձում) գործողութեան մը խիստ յաջող պարագայն, որուն վրայ կարծիքներ փափանակուեցան Տօքթ. Նագգաշեան և Տօքթ. Եաղուալի կողմէն:

8.— Տօքթ. Մատթէոսեան ներկայացուց բազմաթիւ և բազմազան միջնակարեր, զորս ինքը այլևայլ ժամանակներու մէջ հանած էր taille périénale կամ taille sus-pubienne (վերագուային ներձում) գործողութիւններով:

9.— Tumeur Médullaire (ողնածուծային ուռոյ) հիւանդութեան հազուադէպ օրինակի մը ախտաձնաչու-

թեանը մասին Տօքթ . Մատթէոսեան հաղորդեց խիստ շահեկան տեղեկութիւններ , զորս զրի առնելով յանձնեց յետոյ դիւանին :

10.—Diagnostic différentiel des kystes dermoïdes et rejn mobileի ալիքնքն ծփուն երիկամի (Շիբերիամ) և մորակերպ բուժի բաղզատական ախտաձանաչութեան մասին Տօքթ . Եազուալ բերաւ մանրամասն տեղեկութիւն մը ֆրանսերէն , զոր և հաղորդեց մեղյետոյ գրաւոր կերպով :

11.—/Արզանիամեթ լուրիանի) grossesse extra-uterineի մը համար իր կատարած յաջող գործողութիւնը յիշեց Տօքթ . Մալիսաս , և խօսեցաւ ունային խծական զեղձագարութեան (adénopathie cervicale tuberculeuse) գարմանումին մէջ իր գործածած Գալօի դրութիւնը , որ մէծ արզիւնք տուած էր :

13.—Sulfate de quinine է առթուած urticaire (եղնելք) ի մասին բազմազան օրինակներ տուաւ . Տօքթ . Էքմէքճեան , որուն հետ և ուրիշ անդամներ յիշեցին նմանորինակ պարագայներ :

13.—Կ. Պոլոսյ մէջ պատահած ածխախտի (pustule maligne) պարագայներ յիշեց Տօքթ . Պազիլ խան : Նոյնը կրկնեց Տօքթ . Մալթամիկան և յարեց թէ Քարթալի մէջ ալ տեսնուած էր ածխախտէ վարակուած ուրիշ հիւանդ մը : Տօքթ . Խանձեան խօսեցաւ այդ հիւանդութեան գարմանումին վրայ , ի վեր հանելով օգտակար և բուժիչ ազդեցութիւնը /խորում/ cauterisationի որուն դիմած էր և պիստի գիմէր միշտ նման պարագայի մէջ :

Ասոնք էին ահա նիւթերը , ինչպէս նաև տիրող

հիւանդութիւնները , որոնք մեր ժողովներու խորհրդածութեան առարկայ եղան . սակայն այսչափով չի փակուիր Միութեանս տարեշրջանը :

Բացի վերոյիշեալ բժշկական նիւթերէն , Հայ ըրժշկական Միութեան սեղամնին վրայ , և զրեթէ բոլոր ժողովներուն , յուզուեցաւ ընկերական խիստ կարեւոր խնդիր մը . այն էր՝ ԱՄՈՒՄՆԱԿԱՆ վկԱՅՈՒԴՐԻ հարցը , զոր անցեալ շրջանին առաջին անգամ ներկայացուցած էր Տօքթ . Բ . Զիլինկիրեան :

Սոյն խնդրոյն վրայ պատրաստուած հիանալի ճառական խօսեցան , Տօքթորներ՝ Բ . Զիլինկիրեան , Տաղաւարեան , Էքմէքճեան , Փաշաեան , Նագգաշեան , Միութեան և երբ այդ խօսուածներէն յետոյ , Տօքթ . Բ . Զիլինկիրեան պիստի արտայայտուէր , որպէս զի Մրութիւնս եղանակացութեան մը յանգէր և ահա ժողովները դադրեցան գերազագուարար :

Հայ Բժշկական Միութիւնը ունեցաւ նաև ուրիշ ո՞չ նուազ կարեւոր զրադում մը հանրօգուտած . հիւանդապահ — հիւանդապահուհիներու պատրաստութեան յատուկ գասախօսութիւնները , զորոնք Ամենա . Տէր Զաւէն Սրբազնի Պատրիարքի յանձնարարութեամբ ստանձնեց և սկսաւ աւանդել Բերայի , իւսկիւտարի և Գումագարուի մէջ :

Յատուկ յանձնախումբ մը , զոր բազկացուցին՝ Տօքթորներ Տաղաւարեան , Եազուագեան և Միութեան , մամնաւոր ծրագիր մը պատրաստեց առ այս , և որոշեց հինգ գասանթացք , որոնց բացումը հանդիսաւորապէս տեղի ունեցաւ 29 նոյեմբեր 1914ին :

Միութիւնս իր այս ձեռնարկը մեծ յաջողութեամբ կրցաւ գլուխ հանել, չնորհիւ իր անդամներէն՝ Տաղաւարեան, Միմիտեան, Էքմէքնեան, Ռ. Զիլինկիրեան, Պահանջէվանեան, Բ. Տինանեան, Պէօրէքնեան, Գափամանեան, Հանջէրեան, Կորեկեան, Պետրոսեան Տօքթորշներու որոնց մասնակցեցաւ երգեմն և Զեր Ասենապետը:

Ի՞նչ ոգեւորութեամբ լուսեցան այդ դասերը, երկան անկնդիրներու ի՞նչ հոծ բազմութիւն էր, որ երբէք թագերուն մէջ ալ եկաւ հետեւիլ մեր դասերուն. Ի՞նչ ծափահարութիւններ մեր դասախոսութիւնները իւեցին:

Մեր դասախոսները գիտցան այս՝ շահնկան ընծայել իրենց դասերը և ա' յնչափ փայլեցան պերճախօս դասաւանդութեամբ, որ ծաղկեփունջերով չնորհաւարուեցան հասարակութենէն:

Պետական բարձրաստիճանն պաշտօնեայ-բժիշկներ անձամբ եկան ներկայ գտնութիւ ու չնորհակալ մեզ ըլլաւու: Ծնորհակալութեան ուղերձներ և ձառեր, որոնք կը պահուին մեր քով և հրատարակուեցան իսկ աղփային թերթերու մէջ, մեր մերնարկը գրուատելով գըրսուատեցին. և Միութիւնս մեծապէս քաջալերուած, երբ կը սպատասուէր հրապարակային նոր դասախոսութիւններու, և անա տիսուր և սոսկալի պատահարներ եկան խափանել զմեղ:

Դասախոսութիւններու շրջանը երբ աւարտեցաւ, Միութիւնս քննիչ յանձնախումբի միջոցաւ ունկնդիրներէն փափաքողները քննութեան ենթարկեց և արժանաւոր հանգիստացողներուն, Ամեն. Տէր Զաւէն Պատրիար-

քի խճողանքին ու իր 17 մարտ 1915ի ժողովին որոշման համաձայն, տպաւած վկայականներ տուաւ բուրեւելի զոր Կարմիր Մահիկը ճանչցաւ պաշտօնապէս: Եւ քանիներ գացին քրտինք թափել վիրաւոր զինուորաւու մասրը, քանիներ փութացին ծառայիլ զինուորական հիւանդանոցներու մէջ հոս կատ հեռուն և վարձատրուեցան յետոյ աւազ ուսկալի մահերով:

Բժշկական Պարտարանութեան մասին ալ ունեցաւ Միութիւնս լուրջ խորհրդածութիւններ և անցեալ շըրջանին պատրաստուած ու հրատարակուած պարտարանական ոկզունքներու 10րդ և 19րդին արամազրութեամբ իր մէջէն ընարեց Պարտարանական Անձնա մը, բազկացած նազարեան, Եազուպիսն և Էքմէքնեան բժիշկներէ:

Այս Ասեանի համար սահմանեց 18 յօդուածով Կանոնագիր մը զոր գաւերացուց 1915 մարտ 3ի ժողովին մէջ, և մասնաւոր տպագրութեամբ հրատարակեց:

Ունէինք գեռ նախորդ շրջանէն մնացած Սիստառառարան ի պատրաստութիւնը, զոր կը շարունակէր յատուկ յանձնախումբ մը՝ Մատթէուսեան, Պազիլիսան, Փաշաեան, Արթինեան և Թորգոմեան բժիշկներէ կազմուած, որ սպական չի կրցաւ զեռ ի գլուխ հանել ըսպասուած գործը, և անշուշտ գուք ներող կըլլաք այս յապաղումին, նկատի առնելով, թէ բառ կամ բառան մանաւանդ Այսաբառարան շինելը կարելի չէ հապնէպ աշխատատիեամբ փութացնել:

Ունէինք նաև Սրուանձտեանց Եպի կտակով Վանի մէջ կառուցանելի հիւանդանոցի մը առաջարկը, բայց յետաձգուեցաւ այն յարմար ժամանակի:

Հայ Բժշկական Միութիւնը պատիւ ունեցաւ հըսրաւէրուելու Հրեայներու բժշկական նորակազմի իութեան կրղմէ սարքուած հիւանդապահութեանց դասընթացքի բացման հանդէսին, որ տեղի ունեցաւ 1914 գեկանմբեր 10ին, նախագահութեամբ Հրէից Շաբունապետին և Առմերիկեան գեսպան Պր. Մօրկընզառի: Սոյն հանդէսին Միութեանդ կողմէ ներկայ եղաւ Զեր Առենապետը, Տօքթ. Պազիլ Խանի և Տօքթ. Դաւիթեանի հետ:

Միութիւնու այս տարեշրջանին ընթացքին բաղդն ունեցաւ իր Մատենագարանին բժշկական հատորները շատցնել, և ընդունիլ իր մէջ նոր ընկերներ, և այսպէս մեր անդամներու ընդհանուր թիւն հասաւ 43ի:

Եւ այս է ահա մեր Գրդ Տարեշրջանի՝ 1914-15ի գործունէութեան համառնտագիծ պատկերը: Բայց թէ ի՞նչ եղաւ այնուհետեւ, այն ալ քիչ մը յետոյ:



ԽՕՍՔ ԱՏԵՆԱՊԵՏԻՆ

Սիրելի Ընկերներ,

Իմ ջերմ չնորհաւորութիւններս նախ կը յայտնեմ Ձեզ և սրազեղ ինդակցութիւններս, որ բազգ կ'ունենանք այսօր չորս տարուան լուսութենէ ու բանզատուած անդործունէութենէ մը յետոյ, վերսկիլ մեր ժողովներուն, և նոր տարիիս հետ նոր աշխատանքի մը ասպարէցը նետուիլ: Եւ երբ ես ալ կը պատրաստուիմ թողուլ Առենապետութեան Աթուը, որ 1914ին ինձ յանձնեցիք, պարտաք ինձ կը համարիմ անդամ մը եւս նորհակալ Զեղ ըլլալ անկեղծօրէն:

Պատիւը զոր ընծայկցիք Դուք ինձ, ամենամեծն էր, զոր երբէք ունեցած ըլլամ: Եա՛տ ու շա՛տ անդամներ առիթ եղած է ինձ Առենապետութեան պաշտօններ ունենալու Աղքիս մէջ, մինչև անդամ Կայս. Բժշկական Ընկերութեան նախագահներու, բայց բնա՛ւ և բընա՛ւ ա՛յնչափ հպարտ չեւ զգացած ինքզինքս, ո՛րչափ Հայ բժիշկներու այս Միութեան Առենապետութեամբ, զոր պիտի նկատեմ միշտ եռեննամեայ և աւելի բժշկական առպարէցիս չքնաղ մէկ վարձատրութիւնը:

Զեր ինձ ընծայած պատիւը, զիտեմ թէ չկրցայ լիուլի փոխարինել, զիտեմ թէ, իմ նախորդիս, պատուական Տօքթ. Հ. Պ. Մատթէսոսեանի չափ չկարողացայ գոհացնել զեղ, ոսկայն կրնամ գոնէ կատարեալ զիտակցութեամբ յայտարարել, թէ ակար ուժով, մա-

նաւանդ Դիւմնի իմ յարգելի պաշտօնակիցներուս աջակցութեամբը, ջանք չի խնայեցի Միութեանս նպաստակին, հաւատարիմ ծառայելու և բոլորել Զեղ տալու արդիւնաւոր տարի մը, սրուն մէջ Դուք բոլորդ փայլեցաք գիտական գեղեցիկ աշխատաթիւններով, ինչպէս կը վեկայէ մեր տարեկան Տեղեկագիրը:

Սնչո՞ւտ Միութեանս գործառնութիւններուն զէկը աւելի կարող ձեռքի յանձնուելով, աւելի մեծ յառաջդիմութիւններու պիտի առաջնորդուելու, եթէ ամենատիտուր և գառն պարագայներ կայծակի արագութեամբ վրայ համեմով չի խանգարէին զմեղ և Միութեանս եռաւայ մանուկ քայլերը չի խափանէին :

Պիտի ներէք ինձ, որ հարեւանցի յիշատակութիւնն մը ընեմ այս մասին, զի ստիլուած եմ, Հայ բժշկական Միութեան վերջին չորս տարիններու անգործութեան պատմութեանն համար:

* * *

1915 Ապրիլին էր, մինչ Դիւմնի ընկերներուս հետ ես մեր տարեկան հանդիսաւոր ժողովին պատրաստութիւններով, կ'զրագէի, ձերքակալուեցայ յանկարծ և առաջնորդուեցայ բանտ, ուր ինքինքս գտայ Հայ մտաւորականներէ, Հայ զրական ամենակարկառուն գէմքերէ, շա՞տ մը Հայ բժիշկներէ, գեղագործներէ, խմբագիրներէ, ատամինարոյժներէ, Հայ վաճառականներէ, վարդապետներէ, քահանաներէ ու արհեստաւորներէ բաղկացած 250 հոգինոյ որոշուած ու զատուած խումբ մը մէջ: Մէսէրհանի զաղիր, գարշ և ոջոտ մէկ անկիւնը, ոճրագործներու ձիշտ զրացի յարկի մը մէջ ան-

մէնքո մէկ ամնքուն գիշեր մը և ամբողջ օր մը ցաւագին անցնելէ յետոյ, առանց որ և է հարցաքննութեան մը ենթարկուելու, յաջորդ գիշերը մեր կարաւանը անողոքաբար և արագ ընթացքով... առաջնորդուեցաւ գէպի աքսոր, ի՞նչ կ'ըսեմ՝ դէպի ման, ման: անդնական, ման չարչարանքի, որուն գիշատիչ ու լափիչ ձիրաններէն շա՞տ, շա՞տ քիչերը կրցան ձողոպրիլ, և հրաշքով...:

Զերբակալուածներուն մէջ, բայց Միութեան, Ալլահէքրտի, ձէվակիքնեան, ձէլալեան, Թօփնեան, Տինանեան, Գաղազեան բժիշկներէն, Միութեանս անշամներէն ինձ հետ կային՝ Տօքթ. Նազգաշեան, Տօքթ. Տաղաւարեան, Տօքթ. Փաշաեան և Տօքթ. Պակիլ խան, որ Պարսից դեսպանին սրհանջումով բարեւ ամակեցաւ, բայց մնացեալները տարեւ զան Այս կամնլըրը:

Աքսորէս անսպասելի կերպով մը վերացնուալէս յետոյ, առաջին մտածումը որ ունեցայ, մեր տարեկան ժողովը գումարելու էր: Բայց տեսայ որ կարելիութիւն չկար, զի գաւառաբնակ բոլոր Հայերը տեղահանուելով գէպի սպանդ առաջնորդուելու գործն մկամ էր, ՀԱՅԱԶԱՐԴ ծայր տուած էր, և Պոլսաբնակ Հայութիւնն ալ Դամովլեան սուրի մը սպասնալիքին տակ ահ ու զողով կը հեծէր:

Եւ ահա գիշեր մըն ալ ոտիպողաբար կոչուեցայ մեր ժողովատեղին, Կայս. Բժշկական Ընկերութեան ուղարակը, ուր թաղին ոտտիկանսպեար Հայ Բժշկական Միութեան Առենապեար կը վնասէր. ներկայացայ իրեն, և ի՞նչ սարսափով, կրնաք երեւակայել, ձեռքը երկայն

թուղթ մը բռնած ոկտոս հարցափորձել զիս, թէ՝ ե՞ս եմ Հայ Բժշկական Միութեան Առենապետը, թէ ժողով կը գումարէի՞ դեռ, որո՞ւ քով էր Միութեան արտօնագիրը և ո՞վ կը պահէր կնիքը ևայլն ևայլն . . .

Պատասխանեցի անշուշտ, թէ ևս էի Միութեան Առենապետը, թէ արտօնագիրը իմ քովս էր, կնիքը գոմծապետին քով, բայց այլևս ժողով չէինք գումարէր, որովհետեւ անդամներու մեծ մտար զինուորական ծառայութեան մէջ կը գտնուէր և Դիւնի ժամանակն ալ լրացած ըլլալով, կարելի չէր նոր ընտրութիւն կատարել տուանց հրամանի:

Պատասխաներս գրելով կը գրէր, և երբ տւարանեց, ես որաի սասաիկ արտօնումներով կ'սպասէի որ զիս հետք տանէր . . . բայց ո՛չ, ահսայ որ ելաւ մինակն երթալու և կէս-քաղաքավարութեամբ մը իմնգրեց ինձմէ Միութեանս արտօնագիրն ու կնիքը պատրաստ ունենալ, որպէս զի վայրը գայ անմել զանոնք, որպինեւ ըստւ, այլ եւ արգիրած է Հայ անունով ո՞ր եւ է մասնաւր ընկերութիւն:

Եղելութիւնն անմիջապէս հազորդեցի Դիւնի ընկերներու և նաև ուրիշ անդամներու, որոնց հետ համախորհուրդ որոշեցինք որ յանձնեմ արտօնագիրն ու կնիքը:

1917 մարտ 13ին էր, որ տեղի ունեցաւ այս, և նոյն ամսուան 31ին գարձեալ կանչուելով բնակալայրիս ոստիկամատունը, այս անդամ Տօքթ. Տատուր բարեկամու ալ միաբեզ, հոն պաշտօնապէս առին քովէս Միութեանս կնիքը և արտօնագիրը, որուն պատճէնը կը մնայ մեր թուղթերուն մէջ:

Դիւրին է մակարերել, թէ այսպիսի հանգամանք ներու մէջ ժողով գումարելու վրայ մոտածելն իսկ աւելարդ էր և Դիւնս, որուն կէսը պակասած էր արգէն, յետ խորհրդակցութեանս, որուեց սպասել դեռ, սպասել, այս՝ ինչպէս սպասած էր արդէն, մինչեւ լաւագոյն օրերու համարը:

Սպասումի այս տարիները, ինչպէս հանուր Ազգին համար, այսպէս ալ՝ Հայ Բժշկական Միութեանս համար՝ եղաւ, գտան և ամենագառն սուգի ու անձկութեան տարիներ:

Հետզհետէ աքարուեցան, մեր գործն անդամներէն՝ Յօքթ. Պօղոսւան, և թղթակից անդամներէն պարտիզակի Տօքթ. Տէր Սահմանեան և Լողանի Տօքթ. Խուրէն Զիլինկիրեանը, որ Պոլիս կը գտնուէր:

Ամենասոսկալի մահերով մեր անդամներու ընտրելագոյններն հնձուեցան, ՏՕՔԹ. ԽԱԶԻԿ ՓՂՓԱՂԵԱՆՆԻ, այն՝ որ անցեալ չըջանին մեր Դեր Առենապէտը էր, զինուորական ծառայութեան ծանր աշխատութեանը միջոցին հիւանդանալով, քանի մը օրու ան մէջ տափնապալի նուպաններով իր երիտասարդ կեանքը ինքեց 1915 յուլիսին:

Տօքթ. ՅԱԿՈԲ ԷՐՄԵՔԾԱՆՆԻ, մեծ ասպագայ խոսացող արդ երիտասարդ հմտու բժիշկը, որ մեր ժողովներուն մէջ իր զիստական աշխատասիրութիւններովը կը վայլէր, մարեցաւ 1916ին Կարսոյ մէջ, ուր՝ հակառակ իր հիւանդագիրն վիճակին, անզթօրէն իրկուած էր զինուորական պաշտօնը կատարելու:

Տօքթ. ԱՅՐԳԻՌ ՄԵՐԹԼԵԱՆՆԻ, երիտասարդ կա-

բող ակնաբոյմը, որ Միութեանս առաջին շրջանին Դեր-
Ատենազպիրն եղաւ և անոր կազմութեանը ա'յնչափ հագ-
ուով աշխատեցաւ, չարաչար սպաննուեցաւ 1916ին Եր-
դնկայի սահմաններուն մէջ, ուր կը տարուէր, իբրեւ թէ
պաշաճնով:

ՏՕՔԹ. ՆԱ.ԶԱ.ԲԷԹ. ՏԱ.ՂԱ.Ի.Ա.ԲԵ.Ա.Ն.Բ. և ՏՕՔԹ. ԿԱ-
ՐԱՊԵՏ ՓԱՇԱԵԱՆԻ, որոնք ինձ հետ Պօլսէն հանուե-
ցան, բայց խրկուեցան Սյաշ, հոմեւ տարուեցան ով դի-
տէ ուր, և սոսկալի կերտով նահատակուեցան 1915ին։
Եւ ով մենէ չդիտեր այս երկու պատուական ընկերնե-
րուն բժշկական ու գրական երկասիրութիւնները, անոնց՝
Ազգին մատուցած մեծ ծառայութիւնները և Բժշկական
Միութեանս մէջ ունեցած խիստ գնահատելի վաստակը։

ՏՕՔԹ. Ո.ՈՒ.ԲԷ. ԶԻԼԻՆԿԻ. ԵՄ.Ա.Ն.Բ. այն ծաղկահա-
նասակ, նորաբաղբաջ, գիտուն, բանաստեղծ բժիշկը,
մեզի նոր անդամ եղած, որ Պոլս բերուելու պատուա-
կաւ, իր աքսորավայրէն, Զանկըրըն հանուելով շա-
րաչար գնդակահարուեցաւ ձամբան ու նահատակուե-
ցաւ 1915ին, մեր նշանաւոր բանաստեղծ Դանիէլ Վարու-
ժանի հետո։

Ահաւոր են այս մահերը, անդամանելի են այս
կորուսաները Հայ բժշկական Միութեանս համար մասնա-
ւորապէս, և Հայ բժշկութեան համար ընդհանրապէս, և
ես քաջութիւնը չունիմ անոնց կենսագրական դրուստի-
քը հիւսելու այս օր, ինչպէս կը պարսապէ ինձ Ատե-
նապետի պաշտօնու Ուրիշ առթի թողով կատարել, իր
այդ յոյժմիսուր, գժուարին պարտականութիւնս, կը բա-
ւականանամ առ այժմ իմ սպարզիսուքը և կը հրաւի-

րեմ զգեղ ոտքի կանգնիլ պահ մը, անոնց յիշատակն
յարգելու։ (Ամբողջ սրանը ոչի կ'ելլէ)

Հայ Բժշկական Միութիւնս պիտի սպայ, միշտ այս
վաղահաս մահերը, և լալավ պիտի լայ այն կորուստը Հայ
բժշկներան, գեղագործներաւն և ատամնեաբոյմներուն,
որոնք ատալուէր պատերազմին բոլորանուէր ծառայելով,
տարածամ հնառուեցան ծաղիկ հասակի մէջ, անոնց ցանկի
շատ երկար է և պէտք է որ Հայ Բժշկական Միութիւնը
պատրաստէ զայն և երկիւղած յարգանքով պահէ իր
ծոցին մէջ,

Եկը ամեննուգ վշտակիր սրտին զգացումներուն
ձշմարիս թարգմանն ըլլալ կը կարծեմ, եթէ ըսեմ, թէ
Հայ Բժշկական Միութիւնս իր խոր ցաւը կը յացանէ հը-
րապարակաւ և իր համակրաբից անկեղծ վշտակցութիւն-
ները կ'ուղղէ կորսուած բոլոր Հայ բժշկներու, գեղա-
գործներու և ատամնեաբոյմներու սպաւոր ընտանիքներուն։

Եկը այս զառն կոկիծի պահուն ուրախ եմ յացաւ-
րարելու, որ զո՞նէ մեր մէջ ունինք այսօր դարձեալ մեր
յարգելի ընկերը Տօքթ. Նազգաշեան, որ Այշալի բան-
տին մէջ վերջին տեսնողն եղաւ մեր նահատակ արուես-
տակիցներուն, վերջին ձեռք սեղմալը Տօքթ. Տաղա-
ւարեանի և Տօքթ. Փաշակեանի։

Ուրախ եմ նաև յացանելու, որ մեր անդամներէն
Տօքթ. Տատուր, Տօքթ. Պահէվանեան, Տօքթ. Զօհ-
րապ, Տօքթ. Զարգֆնեան, իրենց զինաւորական ծառա-
յութեան մէջ վաստիած ծանր հիւանդաւթիւնէն կրցան
մաղապործ ապրիլ և վերսախն իրենց գործակցութիւնը
բերել մեզ։

ինձ հետ Դուք ամենքդ ուրախ կ'ըլլաք տնշաւշտ լուելով՝ որ Միութեանս երիտասարդ անդամներէն՝ Տօքթէ. Եղ. Շահպաղ և Տօքթէ. Յ. Տիրատուրեան, Տօքթէ. Պետրոսեան և Տօքթէ. Թիւլեան ողջամբ վերադարձած են, ինչպէս նաև խումբ մը երիտասարդ Հայ բժիշկներու, որոնք պատերազմի սոսկալի տանջանքներու կրցած են դիմագրել հերոսարար:

Մեր այս բոլոր արուեստակիցներուն և անոնց՝ որ հետպատէ պիտի գան, Հայ Բժշկական Միութեանք կ'ուղղվէ իր ամենաչերմ խնդակցութիւնները։ Հոս պէտք է յիշեմ նաև, թէ 1915ին ինձ հետ առաջդրուած բժիշկներէն, վերադարձան ժամանակին՝ Տօքթօրներ՝ Ալլահ-վէրափ, Ճէվահիրնեան, Թօփնեան, Ճէլալեան, Տինանեան։

Պահ մը առաջ մեր Տեղեկագրէն առանք, թէ 1915ին մեր Միութեան անդամներուն թիւն հասած էր 43ի. կը ցաւիմ առկայն ըսկելու, թէ այս թիւը պակած է այժմ, մեր վեց սիրելի Ընկերներուն առաժամանակը և ուրիշ երեք անդամներու ալ անհպատակ հրաժարաւումով։

Միութեանս գործն անդամներէն, Տօքթօրներ՝ Եալուպեան, Միտսեան, Պաղիլ խան, Արթինեան, Գատփումաձեան, Կորիկեան, Ֆլուտքլեան, Զիլեան, Հանչ Ջէրեան, Պօղոսեան, Ներսէս Ռւզունեան, Սուրէն Ռւզունեան կը գտնուին արտառահման։ Մեր չորս թղթուկից անդամներէն Տօքթէ. Կոստան կը գտնուի միշտ բջմիւնիս և Տօքթէ. Ճէլալ Պօսթին, իսկ Տօքթէ. Տէր-Ստեփանեան Գօնիս և Տօքթէ. Զաւրիէվ Պէտրօկրափի մէջ Պօլչէվիքներու ձեռքը գրաւ է ինկած, որուն Միու-

թեանս ջերմ համակրութիւնը բոլորանուէր յայտնելով, կը մաղթեմ որ անվտանգ պատափ շուտով։

Այսպէս Կ. Պոլսոյ մէջ եղած գործն անդամներուս թիւը կը մեաց 23։

Միրելի ընկերներու,

Ժամ է արգ, որ նոր եռանդ մը արծարծենք մեր սրբին մէջ, Ժամ է կ'ըսեմ, որ նո՞ր նո՞ր գործունէութեան փարինք անյապաղ, դի ՀԱՅԱՍՏԱՆՆ կը ծնի, ՀԱՅԱՍՏԱՆՆ կը յաննէ իր գարաւոր ածիւններէն՝ անկախ, ազատ, ինքնավար ապրելու։

Պէտք է որ Հայ Բժշկական Միութիւնը, Ա.Զ.Ա. Յին Վերթնենին փառաւոր Արշալոյուր իր վառ և ազգու գործունէութեամբը ողջունէ, շատցնէ իր անդամներուն թիւը, իր մէջ առնելով բոլոր Հայ բժիշկները, ինչպէս նաև բոլոր Հայ գեղագործներն և ատամնաբոյժները, օգնութեան գորաւոր ձեռք մը կարիկառէ ՀԱՅ ԿՈՐՄԻՒՐ ԽՈՂԶԻ, որ կ'աշխատի արգէն սքանչելի թափով։ Իր հէտ նպաստավին ընկ ՆՈՐ ՀԱՅԱՍՏԱՆՆ առողջապահութիւնը. իր անդամները ցրուէ Մայր Հայրենիքի բոլոր անկիւնները, ուշագիր ըլլայ որբերն ու սրբունիները՝ մեր վագուան Հայրերն ու Մայրերը, առաջ մէծնելու, հետամուտ ըլլայ ԱՄՓԻՍԻՆԵՐԻ շատցընելու, ամուրիութեան դէմ սաստիկ պայքար մղելու, ՈՐԴին ՍՈՒԹԻՆ թինեների բազմացնելու, որպէս զի շուտով և շուտով գարմանուի Հայ Ազգութեան կրած ահազին կորուսը, և լցուի փութով միլիսնաւոր Հայ նահատակներու թողած պակասը, զար աննախընթաց բռնապիտութիւն մը իր անօրինակ ուրագործութիւններովը վիեց մեր մէջ։

ՏՕՔԹ. Վ. Յ. Թ. ՈՒՐԳԱ-ՊՈՄ

Եւրա, 3 Յունիս 1919



«Ազգային գրադարան»



NL0248521

